

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

— 0 —

ԱՇՏԻՇԱՏԻ ՀԱՆԴԷՍԸ

Եզրում, 25 յուլիսի

Ինչպէս յայտնի է, տեղիս Երիտա-
սարդական Միութեան վարչութիւնն
առաջարկել էր հայ տաների զիւտի
1500 և տպագրութեան 400-ամեակի
յոքելեանը կատարել Վարդավառին Աշ-
տիշատում, Սահակ կաթողիկոսի գե-
րեղմանի վրայ, Դժբախտաբար, պէտք
է ասել, որ միութեան կոչը չունեցաւ
ցանկալի ազդեցութիւնը, և պատմա-
կան Աշտիշատը անկարող հանդիսա-
ցաւ խաղալ այն դերը, որ ունէր հին
գարեբրում, մանաւանդ հայոց պատ-

մութեան հեթանոսական շրջանում,
երբ նրա տօնին ամեն տարի հայերը
ամեն կողմից գունդազուեղ զխմում
էին դէպի նա, մասնակցելու մի տօ-
նի, որ բառի բուն նշանակութեամբ
համազգային բնոյթ էր կրում... Ներ-
կայի անաջողութիւնը անշուշտ զլիսա-
ւորապէս պէտք է վերապրել Տաճկա-
հայաստանի անապահով վիճակին, մա-
նաւանդ Ռոզոստօի ջարդին, որ ինչ-
պէս երևում է, արեան ու «արցունքի
հովիտը» ուղևորելու մտքից յետ է
կանգնեցրել շատ ու շատ ուսասնա-
յերի:

Աշտիշատում կայանալիք հոնդիսին

մասնակցելու համար անցեալ շաբաթ
աշտեղից մեկնեց ազգային դպրոցնե-
րի ընդհ. տեսուչ պ. Ռոստոմ, մի քա-
նի ուսուցիչների և 13 աշակերտների
հետ: Նոյն օրը ճանապարհ ընկան դէ-
պի ս. Կարապետ նաև Շիրակի կողմե-
րից եկած ուխտաւ: Երն ու մի երկու
Կարնեցի ընտանիք: Վերջապէս ան-
ցեալ օրը տեղա ժամանեց Թիֆլիզից
ինտելիգենտների մի փոքրիկ խումբ
որն և երէկ մեկնեց դէպի Տարօն:

Փաւստոս